2009

ՀՀ կենտրոնական բանկի
բանբեր

1-ին
եռամսյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսական համակարգը 4

Վճարահաշվարկային համակարգի զարգացումներ 15

Մակրոտնտեսական ցուցանիշները 2009 թ. հունվար – մարտին 23

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ 39

ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԿԱԶՄԸ 40

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

31.03.2009 թվականի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 22 առևտրային բանկեր՝ 391 մասնաճյուղերով:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ

2009 թվականի առաջին եռամսյակում առևտրային բանկերի ընդհանուր կապիտալն ավելացել է 1.5%-ով (3.5 մլրդ դրամով) և 31.03.2008 թ. դրությամբ կազմել 238.9 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճը հիմնականում պայմանավորվել է մեկ բանկի կողմից կանոնադրական հիմնադրամի 3.0 մլրդ դրամ համալրմամբ:

Եռամսյակի ընթացքում ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը նվազել է 1.3 տոկոսային կետով և կազմել 26.2%:

Դիտարկվող ժամանակահատվածում ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը նվազել է 1.8 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 21.2%:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Հաշվետու եռամսյակի ընթացքում ընդհանուր պարտավորություններն ավելացել են 12.8%-ով (100.7 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 889.0 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 17 բանկում և նվազում՝ 5 բանկում:

Բանկերի պարտավորությունների կազմում հիմնականում աճել են իրավաբանական և ֆիզիկական անձանց համընդհանուր ավանդները (ցպահանջ և ժամկետային միջոցները). աճը կազմել է 18% (81.1 մլրդ դրամ):

31.03.2009 թ. դրությամբ համընդհանուր ավանդների մեծությունը կազմել է 530.5 մլրդ դրամ:

Իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներն աճել են 23.7%-ով (50.6 մլրդ դրամով), ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդները՝ 12.9%-ով (30.4 մլրդ դրամով):

Առևտրային բանկերի ներգրաված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 6. Բանկերի թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ (ներառյալ ԿԲ), 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ Կառավարության նկատմամբ, 9. Այլ պարտավորություններ

Բանկերի լորո թղթակցային հաշիվներն աճել են 84.7%-ով (4.6 մլրդ դրամով), բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ) այլ պարտավորությունները՝ 2.9%-ով (6.2 մլրդ դրամով) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները՝ 11.3%-ով (6.8 մլրդ դրամով):

Պարտավորությունների կազմում տեսակարար կշիռների կտրուկ փոփոխություններ չեն արձանագրվել: Համեմատաբար զգալի՝ 1.9 տոկոսային կետով նվազել է բանկերի լորո թղթակցային հաշիվների և բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ) այլ պարտավորությունների տեսակարար կշիռը և 1.7 տոկոսային կետով ավելացել է իրավաբանական անձանց ժամկետային ավանդների տեսակարար կշիռը:


ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐԸ

Առաջին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր ակտիվներն աճել են 10.2%-ով (104.2 մլրդ դրամով) և կազմել 1 տրլն 127.9 մլրդ դրամ: 18 բանկում արձանագրվել է ակտիվների աճ, իսկ 4 բանկում՝ նվազում:

Արտարժութային ակտիվները աճել են 40.0%-ով (166.3 մլրդ դրամով), ՀՀ դրամով ակտիվները նվազել են 10.2%-ով (62.1 մլրդ դրամով), ինչի արդյունքում դրամային ակտիվների տեսակարար կշիռը նվազել է 11 տոկոսային կետով և կազմել 48.4%:


Ակտիվային հոդվածներով խոշոր աճ են ապահովել ԿԲ-ում թղթակցային հաշիվները՝ 51.1%-ով (53.2 մլրդ դրամով), առևտրային բանկերի նկատմամբ պահանջները (բացառությամբ թղթակցային նոստրո հաշիվների)՝ 148.7%-ով (28.7 մլրդ դրամով) և տնտեսության վարկերը՝ 3.9%-ով (24.0 մլրդ դրամով):

Առևտրային բանկերի ակտիվների ծավալները




Առևտրային բանկերի ակտիվների կառուցվածքը

31.12.2008



31.03.2009



1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր (ներառյալ ռեպո համաձ-գրեր)
4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ
5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխատակիցներին
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկայինի)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ

Իրավաբանական անձանց վարկերն ավելացել են 9.5%-ով (27.6 մլրդ դրամով), ֆիզիկական անձանց վարկերը նվազել են 0.8%-ով (2.5 մլրդ դրամով), բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը նվազել են 22.9%-ով (2.7 մլրդ դրամով):


Եռամսյակի վերջին բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը կազմել է 640.8 մլրդ դրամ, որի 49.5%-ը բաժին է ընկել իրավաբանական անձանց, 47.7%-ը՝ ֆիզիկական անձանց, 2.8%-ը՝ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին:

Եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր վարկերը և դեբիտորական պարտքերը (ներառյալ միջբանկային ավանդներն ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) աճել են 3.9%-ով (25.3 մլրդ դրամով) և կազմել 676.0 մլրդ դրամ: Դրամով վարկերը և դեբիտորական պարտքերը նվազել են 13.1%-ով և կազմել 346.7 մլրդ դրամ, իսկ արտարժույթով վարկերը և դեբիտորական պարտքերը աճել են 30.9%-ով և կազմել 329.2 մլրդ դրամ: Ընդհանուր վարկային ներդրումներում և դեբիտորական պարտքերում դրամով ներդրումների տեսակարար կշիռը նվազել է 10 տոկոսային կետով և կազմել 51.3%:

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ավելացել են 67.1%-ով, իսկ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 3.1%-ով և համապատասխանաբար կազմել են 13.2 մլրդ դրամ և 662.7 մլրդ դրամ:

Զգալի ավելացել են արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի և շինարարության ճյուղերի վարկերը՝ համապատասխանաբար 9.1 մլրդ դրամով, 8.4 մլրդ դրամով, 8.1 մլրդ դրամով և 3.8 մլրդ դրամով: Ըստ տնտեսության ճյուղերի՝ ռեզիդենտների վարկային ներդրումների կառուցվածքում 3 տոկոսային կետով նվազել է սպառողական վարկերի և մոտ 1-ական տոկոսային կետերով ավելացել են արդյունաբերության, գյուղատնտեսության և առևտրի ճյուղերի վարկերի տեսակարար կշիռները:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումները՝ ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2.Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

Եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ստանդարտ ակտիվների տեսակարար կշիռը նվազել է 2.9 տոկոսային կետով՝ կազմելով ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 93.2%-ը: Տարեվերջին բանկային համակարգի «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 5.0%-ը, «ոչ ստանդարտ» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.5%-ը, «կասկածելի» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.3%-ը:


Առևտրային բանկերի ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշը եռամսյակի ընթացքում ավելացել է 5.2 տոկոսային կետով, իսկ ընթացիկ իրացվելիության ցուցանիշը՝ 32.3 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել են 29.1% և 135.4%:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

2009 թ. առաջին եռամսյակի ընթացքում բանկային համակարգն աշխատել է 403 մլն դրամ վնասով: Տարվա առաջին երեք ամիսներին 13 բանկ աշխատել է շահույթով, իսկ 9 բանկ՝ վնասով:

Առևտրային բանկերն ապահովել են ընդհանուր 46.0 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 45.5 մլրդ դրամի համախառն ծախսեր: Բանկային համակարգի շահույթը մինչև հարկումը կազմել է 533 մլն դրամ:

Առևտրային բանկերի եկամուտների և ծախսերի կառուցվածքը 2009թ. առաջին եռամսյակում



Բանկային համակարգի եկամուտների կազմում տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը կազմել է 57.6%, ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը՝ 9.2% և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձի տեսակարար կշիռը՝ 33.2%: Տոկոսային եկամուտների 85.2%-ը բաժին է ընկել տնտեսության վարկերից ստացված եկամուտներին: Ոչ տոկոսային եկամուտների կազմում ստացված միջնորդավճարները կազմել են 69.7%-ը:

Բանկային համակարգի ծախսերի կազմում տոկոսային ծախսերի տեսակարար կշիռը կազմել է 26.4%, ոչ տոկոսային ծախսերի տեսակարար կշիռը՝ 30.6% , ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված մասհանումների տեսակարար կշիռը՝ 43.0%: Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը՝ 44.4%-ը, բաժին է ընկել բանկային համակարգի աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին, իսկ տոկոսային ծախսերում 45.8% տեսակարար կշիռը բաժին է ընկել ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներին:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2009 թվականի առաջին եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել է 25 վարկային կազմակերպություն, որոնց մասնաճյուղերի ընդհանուր քանակը քառասունութ է:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվները առաջին եռամսյակում աճել են 12.5%-ով (8.2 մլրդ դրամով) և կազմել 74 մլրդ դրամ կամ ընդհանուր բանկային համակարգի ակտիվների 6.6%-ը: Եռամսյակի ընթացքում ակտիվների աճ է արձանագրվել 19, իսկ նվազում՝ 6 վարկային կազմակերպությունում:

Վարկային կազմակերպությունների կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն աճել է 5.5%-ով կամ 2.9 մլրդ դրամով և 31.03.2009թ. դրությամբ կազմել 56.4 մլրդ դրամ: Դրամով տրամադրված վարկերի ծավալը նվազել է 7.6%-ով (2.1 մլրդ դրամ), արտարժույթով տրամադրված վարկերի ծավալն աճել է 20.1%-ով (5.1 մլրդ դրամ): Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերն ավելացել են 3.5%-ով և կազմել 35.4 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց տրամադրված վարկերն ավելացել են 9.1%-ով և կազմել 20.6 մլրդ դրամ: Լիզինգի ծավալն աճել է 13.9%-ով՝ կազմելով 5.6 մլրդ դրամ:

31.03.2009թ. դրությամբ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր ծավալն աճել է 7.2%-ով՝ կազմելով 67 մլրդ դրամ: Վարկային ներդրումներում զգալի ավելացել են շինարարության ճյուղի (44.3% աճ), հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտների (26.4% աճ) և ֆինանսական հատվածի (20.5% աճ) վարկերի ծավալները: Եռամսյակի վերջի դրությամբ վարկային ներդրումներում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին

է ընկել առևտրի ոլորտի վարկավորմանը՝ 16.4%, հաջորդը շինարարության վարկավորումն է՝ 14.5%: Գյուղատնտեսական վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում կազմել է 14.2%, հիփոթեքային վարկերինը՝ 11.4%, սպառողական վարկերինը՝ 11.1%, արդյունաբերության վարկերինը՝ 10.2% և այլ ճյուղերինը՝ 22.1%:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ եռամսյակի ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը 3.9 տոկոսային կետով նվազել է և կազմել 92.1%:

Ընդհանուր կապիտալի մեծությունը աճել է 12.3%-ով (2.2 մլրդ դրամով) և կազմել 20.2 մլրդ դրամ: Վարկային կազմակերպություններից չորսը համալրել են կանոնադրական հիմնադրամը ընդհանուր 1.1 մլրդ դրամի չափով:

2009թ. առաջին եռամսյակի զուտ շահույթը կազմել է 1.1 մլրդ դրամ: Տարեսկզբից շահույթով է աշխատել 18, իսկ վնասով՝ 7 վարկային կազմակերպություն:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր պարտավորություններն աճել են 12.6%-ով կամ 6 մլրդ դրամով և 31.03.2009թ. դրությամբ կազմել 53.7 մլրդ դրամ: Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները աճել են 16.8%-ով կամ 5.4 մլրդ դրամով և կազմել են 37.9 մլրդ դրամ: Ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ ժամկետային պարտավորությունները նվազել են 6.2% տոկոսով կամ 673 մլն դրամով՝ կազմելով 10.3 մլրդ դրամ:

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքը 2009 թվականի առաջին եռամսյակի վերջին


ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները[1] արտաքին աշխարհի նկատմամբ 2009 թվականի առաջին եռամսյակի վերջին կազմել են 500.3 մլն դոլար՝ նախորդ եռամսյակի վերջի 555 մլն դոլարի փոխարեն: 2009 թվականի առաջին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավել են 81 մլն դոլար վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 127 մլն դոլար հիմնական գումարի մարումներ:

Առաջին եռամսյակի վերջին առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել՝ Ռուսաստանը, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 17.3 % (նախորդ տարվա վերջին՝ 16.3 %), Ֆրանսիան՝ 10.5 % (նախորդ տարվա վերջին՝ 9.4 %), Լատվիան՝ 9.6 % (նախորդ տարի՝ 9.0 %), Գերմանիան՝ 8.5 % (նախորդ տարվա վերջին՝ 8.6 %): Վարկերի մոտ 26.2 %-ը տրվել է միջազգային կազմակերպությունների կողմից:

Արտաքին աշխարհից ներգրավված վարկերը բանկերը հիմնականում տեղաբաշխել են տնտեսության հետևյալ հատվածներում՝ 144 մլն դոլարը՝ ֆինանսական, 142 մլն դոլարը՝ արդյունաբերության, 69 մլն դոլարը՝ սպառողական և հիփոթեքային վարկերի և 68 մլն դոլարը՝ առևտրի հատվածներում:

2009 թվականի առաջին եռամսյակի վերջին ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ տարվա վերջի համեմատ նվազել է և կազմել 6.2 %: Արտաքին վարկերի մոտ 70.8 %-ը լողացող (LIBOR, EURIBOR, ԿԲ ՊՊ) տոկոսադրույքով է: Վարկերի միջին ժամկետայնությունը մոտ 4.2 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռը նվազել է և կազմել ներգրավված վարկերի 4.7 %-ը (նախորդ տարվա վերջին՝ 12.5 %):

ՀՀ առևտրային բանկերի արտաքին մասնավոր պարտքը 2003 - 2009 թթ.



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31.03.2009 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործել է 11 ապահովագրական ընկերություն:

Հաշվետու եռամսյակում ապահովագրական ընկերությունների ակտիվներն ավելացել են 6.0%-ով՝ 31.03.2009 թ. դրությամբ կազմելով 12.4 մլրդ դրամ: Ապահովագրական ընկերությունների ընդհանուր կապիտալն աճել է 17.0%-ով՝ կազմելով 8.8 մլրդ դրամ, իսկ պարտավորությունները նվազել են 13.6%-ով՝ կազմելով 3.6 մլրդ դրամ:

Ապահովագրական ընկերությունների ակտիվների կազմում համեմատաբար բարձր տեսակարար կշիռը բաժին է ընկել ընթացիկ ավանդներին և այլ ներդրումներին (46.6% տեսակարար կշիռ), բանկային հաշիվներին (16.2% տեսակարար կշիռ), արժեթղթերում ներդրումներին (11.7% տեսակարար կշիռ) և ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարներին (10.3% տեսակարար կշիռ):

Ապահովագրական ընկերությունների պարտավորությունների կազմում համեմատաբար բարձր տեսակարար կշիռը բաժին է ընկել չվաստակած ապահովագրավճարների պահուստին (49.3% տեսակարար կշիռ) և համապահովագրողներին, վերապահովագրողներին փոխանցվելիք գումարներին (24.8% տեսակարար կշիռ):

2009 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ապահովագրական ընկերությունների շահույթը, շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո, կազմել է 925 մլն դրամ: Շահույթով են աշխատել 9, իսկ վնասով՝ 2 ընկերություն:

Հաշվեգրված ապահովագրավճարները կազմել են 1.4 մլրդ դրամ, իսկ վերապահովագրողին փոխանցվող ապահովագրավճարները՝ 486 մլն դրամ կամ ապահովագրավճարների 35.4%-ը:

Ապահովագրական հատուցումների մեծությունը կազմել է 403 մլն դրամ, իսկ վերապահովագրողներից ստացվող գումարներն ապահովագրական հատուցումների գծով՝ 141 մլն դրամ կամ ապահովագրական հատուցումների 35.1%-ը:

Ապահովագրական գումարների մեծությունը 31.03.2009 թ. դրությամբ կազմել է 2.77 տրլն դրամ (31.12.2008 թ. դրությամբ գործող պայմանագրերի ապահովագրական գումարների մեծությունը 2.21 տրլն դրամ էր):

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

2009 թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում գործել են ներդրումային ծառայություններ մատուցող 22 բանկ և 9 ներդրումային ընկերություն, ընդ որում՝ բոլոր ինը ընկերությունները կարող են իրենց կամ հաճախորդի անունից և իրենց կամ հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ իրականացնել: Ներդրումային ընկերություններից ութը կարող են նաև հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականներ ընդունել և հաղորդել, հինգը՝ արժեթղթերով ներդրումների հետ կապված խորհրդատվություն տրամադրել, վեցը՝ իրականացնել արժեթղթերի տեղաբաշխման գործունեություն, չորսը՝ արժեթղթերի փաթեթի կառավարում և ևս չորսը՝ արժեթղթերի պահառության գործունեություն:

31.03.2009 թ. դրությամբ ներդրումային ընկերությունների ընդհանուր ակտիվները կազմել են 6.8 մլրդ դրամ՝ տարեվերջի համեմատ նվազելով 12.3%-ով՝ հիմնականում պայմանավորված ներդրումային ընկերություններից մեկի՝ շուկայից դուրս գալով: Ներդրումային ընկերությունների կապիտալը նվազել է 1.1%-ով՝ կազմելով 2.7 մլրդ դրամ:

2009 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ծավալը նախորդ ամսվա համեմատ աճել է 13.7%-ով՝ կազմելով 88.6 մլրդ դրամ: Պետական պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 24.1%-ով՝ կազմելով 46.6 մլրդ դրամ: Արդյունքում՝ զգալի նվազել է պետական արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների տեսակարար կշիռը գործառնությունների ընդհանուր ծավալում (26.1 տոկոսային կետով)՝ կազմելով 52.6%: Բաժնետոմսերի առք ու վաճառքի գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 122.1%-ով՝ կազմելով 24.9 մլրդ դրամ, իսկ կորպորատիվ արժեթղթերինը՝ 16.9 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ աճելով ավելի քան երեք անգամ: Ընդ որում, բաժնետոմսերի և կորպորատիվ պարտատոմսերի տեսակարար կշիռները գործառնությունների ընդհանուր ծավալում կազմել են համապատասխանաբար 28.1% և 19.1%:

Պետական պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունների ծավալները ըստ արժեթղթերի ժամկետայնությունների գրեթե հավասարաչափ են բաշխվել. երկարաժամկետ պարտատոմսերով գործառնությունները կազմել են պետական պարտատոմսերով ընդհանուր գործառնությունների 36.6%-ը, իսկ կարճաժամկետ և միջին ժամկետայնության արժեթղթերով՝ համապատասխանաբար 32.5% և 30.9%:

2009 թ. առաջին եռամսյակի ընթացքում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները կազմել են ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված առուվաճառքի ընդհանուր գործառնությունների 6.6%-ը (նախորդ եռամսյակում՝ 5.0%):

Կարգավորվող շուկայում իրականացված գործառնությունները նախորդ եռամսյակի համեմատ ավելացել են 3.6 անգամ և կազմել 6.9 մլրդ դրամ, ընդ որում՝ շրջանառության 53.6%-ը կազմել են կորպորատիվ պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունները, իսկ 30.9%-ը՝ պետական պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունները: 2009 թ. առաջին եռամսյակում ռեպո գործառնությունները սկսել են իրականացվել նաև կարգավորվող շուկայում, ընդ որում՝ եռամսյակի ընթացքում ռեպո գործառնությունների ծավալը կազմել է բորսայական շրջանառության 15.4%-ը:

Ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը (ներառյալ կարգավորվող շուկայում իրականացված ռեպո գործառնությունները) նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 50.6%-ով և կազմել է 92.3 մլրդ դրամ, որից 48.9 մլրդ դրամը կազմել են երկարաձգված գործարքները:

31.03.2009 թ. դրությամբ հավատարմագրային կառավարման վերցված միջոցների ծավալը կազմել է 1.4 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի վերջի դրությամբ նվազելով 9.4%-ով:

Հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողների թիվը կազմել է 1278 ընկերություն, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը՝ 126748 մարդ:

31.03.2009թ. դրությամբ բորսայում ցուցակված են եղել թվով 18 հաշվետու թողարկողների արժեթղթեր: Հաշվետու թողարկող ընկերություններից 6-ը բանկ է, 1-ը՝ ներդրումային ընկերություն: Ընդ որում՝ հաշվետու թողարկողներից 9-ը թողարկել են բաժնետոմսեր (ընդհանուր ծավալը կազմել է 24,1 մլրդ դրամ), իսկ 10-ը՝ պարտատոմսեր (ծավալը կազմել է 8,1 մլրդ դրամ): «Արարատ բանկ» ԲԲԸ-ն թողարկել է ինչպես բաժնային, այնպես էլ պարտքային արժեթղթեր: Թողարկված պարտքային արժեթղթերի զգալի ծավալները բաժին են ընկել տնտեսության ֆինանսական հատվածում գործունեություն իրականացնող ընկերություններին՝ 43%-ը, և առևտրի ոլորտի ընկերություններին՝ 20%-ը:

Հաշվետու եռամսյակի ընթացքում կորպորատիվ պարտատոմսերի թողարկման ազդագիր է գրանցել Ինեկոբանկը՝ ընդհանուր 350 մլն դրամ ծավալով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2009 թվականի առաջին եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված օրենքների նախագծեր

1. ՀՀ կառավարություն է ներկայացվել ***«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:***

Նշված նախագծի մշակումը պայմանավորված էր գործող օրենսդրությամբ սահմանված որոշ պայմանների խստացմամբ և որոշ դրույթների հստակեցմամբ, մասնավորապես՝ խմբավորվել, ավելացվել և հստակեցվել են վճարահաշվարկային համակարգ ստեղծելու, դրան անդամակցելու և վճարահաշվարկային կազմակերպության լիցենզավորման մերժման հիմքերը, հստակեցվել է «վճարահաշվարկային ծառայություն» հասկացության սահմանումը՝ առավելագույնս համապատասխանեցվելով ԵՄ օրենսդրության պահանջներին, սահմանվել է վճարահաշվարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվ՝ 100 միլիոն դրամի չափով, վճարահաշվարկային կազմակերպության կողմից քաղաքացիների հանդեպ պարտավորությունները չկատարելու դեպքում վերջինիս բանկային հաշիվներով գործառնությունների կասեցման ընթացակարգ, վճարահաշվարկային կազմակերպության՝ իր գործառնական գործառույթների կատարումը այլ անձի պատվիրակելու իրավունքը, հստակեցվել են օրենքով սահմանված ժամկետները, պատասխանատվության միջոցները: Կատարվել են նաև տեխնիկական, խմբագրական և բովանդակային լրացումներ և փոփոխություններ:

Նշված նախագծի ընդունումը կհստակեցնի վճարահաշվարկային համակարգերի և կազմակերպությունների ստեղծման և գործունեության հետ կապված ընթացակարգերը և կնպաստի վերջիններիս գործունեության առավել արդյունավետ կարգավորմանը:

2. ՀՀ կառավարություն են ներկայացվել ***ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագծեր:***

Առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է ստեղծել նոր ֆինանսական գործիք՝ ստորադաս փոխառություն: Պարտապանի լուծարման դեպքում ստորադաս փոխառություն տված անձի պահանջները բավարարվում են մյուս բոլոր պարտատերերի պահանջներից հետո:

Գործող օրենսդրությամբ նման գործիքի կիրառում չի նախատեսվում, և գործնականում ստորադաս փոխառությունների տրամադրումը կարող է առաջացնել դժվարություններ՝ օրենսդրությանը համապատասխանելու տեսանկյունից:

Նախատեսվում է Քաղաքացիական օրենսգրքում սահմանել «ստորադաս փոխառություն» հասկացությունը, ինչպես նաև փոփոխություններ կատարել այն օրենքներում, որոնք սահմանում են պարտատերերի պահանջների բավարարման հերթականություն: Ստորադաս փոխառություններն ավելի ռիսկային և եկամտաբեր գործիքներ են և կարող են հետաքրքրություն ներկայացնել որոշ ներդրողների համար: Բացի այդ, ստորադաս փոխառություններն ընկերության կապիտալն ավելացնելու ավելի արագ և ճկուն միջոց են, քան կանոնադրական կապիտալի ավելացումը: Այդ իսկ պատճառով ընկերության մասնակիցները կարող են նախընտրել ընկերության կանոնադրական կապիտալը ավելացնելու փոխարեն ստորադաս փոխառություն տրամադրել ընկերությանը:

Ակնկալվում է, որ առաջարկվող փոփոխությունները փոխառու կապիտալ ներգրավելու լրացուցիչ հնարավորություններ կստեղծեն առևտրային կազմակերպությունների և հատկապես ֆինանսական կազմակերպությունների համար:

3. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացվել ***«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:***

Նախագիծը սահմանում է ՀՀ տարածքում ընդհանուր օգտագործման ճանապարհներով երթևեկելու համար նախատեսված ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի կողմից երրորդ անձանց պատճառված վնասներից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պարտականությունը:

Օրենքի հիմնական նպատակը ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց ապահովագրական հատուցումների վճարման երաշխավորումն է:

Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն կարող են իրականացնել միայն Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերությունները:

Բյուրոն ունի մի շարք կարևոր գործառույթներ՝ մասնավորապես սահմանում է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ոլորտում կանոններ, որոնք գրանցվում են ԿԲ-ում:

Ապահովագրական գումարը չպետք է պակաս լինի՝ մահվան դեպքում՝ 9 մլն դրամից՝ յուրաքանչյուր անձի համար՝ անկախ փաստացի պատճառված վնասից, 9 մլն դրամից՝ առողջությանը պատճառված վնասների դեպքում՝ յուրաքանչյուր անձի համար՝ ըստ փաստացի պատճառված վնասի և 2.5 մլն դրամից՝ գույքային վնասների համար՝ մեկ պատահարի համար՝ անկախ տուժած անձանց քանակից:

Պատճառված վնասի չափը և դրանում անձի մեղավորությունը հաստատելու են Բյուրոյի կողմից որակավորված փորձագետները և այլ իրավասու մարմիններ (բուժական հաստատություններ, դատարան և այլն):

Նախատեսվել է ապահովագրական հատուցումներ ստանալու հեշտացված ընթացակարգ՝ տուժած անձը պատահարից հետո 3 ամսվա ընթացքում դիմում է վնասը պատճառողի ապահովագրական ընկերությանը և կարող է գործել իր ապահովագրական ընկերության միջոցով:

Ապահովագրական ընկերությունը փորձաքննության ավարտից հետո, որը չպետք է 3 ամսից ավելի լինի, որոշում է կայացնում 5 օրվա ընթացքում ապահովագրական հատուցում վճարելու կամ վճարումը մերժելու մասին:

Ապահովագրական հատուցման իրավունքից չեն օգտվում վնաս պատճառած անձը, ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը, նրա ընտանիքի անդամները՝ գույքային վնասների մասով և հափշտակված ավտոտրանսպորտային միջոցի մեջ գտնվող անձինք, եթե նրանք իրենց կամքով են նստել ավտոտրանսպորտային միջոց:

Բյուրոն վերահսկելու է ԿԲ-ն (հաշվետվություններ, ստուգումներ) և կարող է կիրառել պատասխանատվության միջոցներ: Բյուրոն ունի վարչական և գործառնական ծախսեր:

Բյուրոն կառավարում է տեղեկատվական համակարգը, որին միացած են ԿԲ-ն, ապահովագրական ընկերությունները և ճանապարհային ոստիկանությունը:

4. ՀՀ կառավարություն է ներկայացվել ***«Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:***

Օրենքը կարգավորում է ներդրումային ֆոնդերի տեսակները, ներդրումային ֆոնդերի, ներդրումային ֆոնդերի կառավարիչների և ներդրումային ֆոնդերի պահառուների իրավական կարգավիճակը, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների կազմավորման, գործունեության, կառավարման ու դադարեցման, ինչպես նաև ներդրողների իրավունքների պաշտպանության հետ կապված այլ հարաբերություններ:

Օրենքում ներառվել են հետևյալ հիմնական դրույթները՝

- Ներդրումային ֆոնդ է համարվում իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կամ չունեցող այն կազմակերպությունը, որը ստեղծվել և (կամ) գործում է՝ նպատակ ունենալով ներդրողներից հավաքագրված միջոցների՝ արժեթղթերում և (կամ) այլ ակտիվներում կոլեկտիվ ներդրումների միջոցով ապահովել այդ միջոցների վերադարձը ներդրողներին կապիտալի ավելացման, շահութաբաժինների և (կամ) այլ ֆինանսական եկամտի տեսքով: Միջոցները վերադարձվում են կազմակերպությունում նրանց ներդրումներին համապատասխան և կախված այդ ներդրումների կառավարման արդյունքներից՝ անկախ այն հանգամանքից՝ այդ կազմակերպությունն իր հիմնադիր փաստաթղթերում կամ առաջարկի փաստաթղթերում բնութագրվում է որպես «ներդրումային ֆոնդ», թե՝ ոչ, ինչպես նաև անկախ այն բանից, թե սահմանված նպատակը և (կամ) գործունեությունն իրականում տվյալ կազմակերպության կողմից իրականացվել են, թե՝ ոչ:
- Նախատեսվում է ստանդարտ և մասնագիտացված ֆոնդերի (որոնք իրարից տարբերվում են ներդրումային քաղաքականությամբ), ինչպես նաև բաց, միջակայքային և փակ ֆոնդերի (որոնք տարբերվում են փայերի (բաժնետոմսերի) թողարկման պարբերականությամբ, ինչպես նաև թողարկված փայերի (բաժնետոմսերի) հետգնման հնարավորությամբ և պարբերականությամբ) ստեղծման հնարավորություն:
- Իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պայմանագրային ֆոնդի ստեղծման համար նախատեսված է ֆոնդի կանոնների գրանցման, իսկ բաժնետիրական ընկերության կամ կոմանդիտային ընկերակցության ձևով ստեղծվող կորպորատիվ ֆոնդի համար՝ ֆոնդի գրանցման կարգ, որի ժամանակ կանոններին (կանոնադրությանը) ներկայացվում են առանձնահատուկ պահանջներ՝ ուղղված ֆոնդի մասնակիցների իրավունքների պաշտպանությանը:
- Առանձնահատուկ կարգավորման են ենթարկվում բաց ֆոնդերը, որոնց փայերը (բաժնետոմսերը) թողարկվում են շարունակական ձևով և չունեն հաստատագրված արժեք ու քանակ, ընդ որում՝ նախատեսվում է, որ բաց կորպորատիվ ֆոնդը ստեղծվում է փոփոխական կապիտալով բաժնետիրական ընկերության կազմակերպաիրավական ձևով, այսինքն՝ այնպիսի բաժնետիրական ընկերության, որը չունի հաստատագրված կապիտալ, և որի կապիտալը ցանկացած պահի հավասարարժեք է ֆոնդի զուտ ակտիվների արժեքին:
- Ֆոնդի փայի (բաժնետոմսի) թողարկման և հետգնման (մարման) գինը պետք է համապատասխանի փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքին, որը ենթակա է որոշման բաց ֆոնդի դեպքում՝ յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում, իսկ փակ և միջակայքային ֆոնդերի դեպքում՝ փայերի (բաժնետոմսերի) տեղաբաշխման (միջակայքային ֆոնդի դեպքում՝ նաև հետգնման) օրվան նախորդող օրվա, իսկ փայերի (բաժնետոմսերի) տեղաբաշխման ընթացքում՝ յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում:
- Ակտիվների ներդրման կարևորագույն սկզբունքի համաձայն, ըստ որի՝ ֆոնդի ներդրումները պետք է բավարար չափով բազմազանեցված լինեն՝ ռիսկերի արդյունավետ բաշխման նպատակով, նախատեսվում են այն ակտիվները, որոնցում կարող են ներդրվել ֆոնդի ակտիվները, և այդ ակտիվներում ռիսկերի բաշխման պահանջները՝ հաշվի առնելով ֆոնդի տարբեր տեսակների առանձնահատկությունները, ընդ որում՝ առավել խիստ պահանջներ են ներկայացվում ստանդարտ ֆոնդերին:
- Ֆոնդի ակտիվները պետք է կառավարի Օրենքով սահմանված կարգով որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ գրանցված և լիցենզավորված բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որն իրավասու է իրականացնելու միայն ֆոնդի կառավարման գործունեություն, իսկ համապատասխան թույլտվություն ստանալու դեպքում՝ նաև մատուցելու Օրենքով նախատեսված ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ և կառավարելու կենսաթոշակային ֆոնդեր:

- Ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցությանը, կառավարմանը և գործունեությանը ներկայացվում են առանձնահատուկ պահանջներ:
- Ներդրումային ֆոնդի ակտիվների պահառությունը պետք է հանձնվի ներդրումային ֆոնդի կառավարչի հետ փոխկապակցված անձ չհամարվող, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով արժեթղթերի պահառության ծառայություն մատուցող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկին, որին, ի լրումն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով արժեթղթերի պահառուի համար սահմանված պարտականությունների, ներկայացվում են լրացուցիչ պահանջներ և պարտականություններ:
- Առանձնահատուկ պահանջներ են նախատեսվում ներդրումային ֆոնդի և նրա կառավարչի կողմից տեղեկատվության բացահայտման համար:
- Սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ֆոնդերի արժեթղթերի վաճառքի կարգը, մասնավորապես՝ դրա համար Կենտրոնական բանկի նախնական թույլտվությունը ստանալու անհրաժեշտությունը:

Ենթաօրենսդրական փոփոխություններ

2009 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից փոփոխություններ են կատարվել բանկային գործունեությանն առնչվող հետևյալ իրավական ակտերում.

1. Հաշվի առնելով «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում ստորադաս փոխառությունների գծով կատարված փոփոխությունները՝ «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում կատարվել են լրացումներ՝ բանկերի լրացուցիչ կապիտալի կազմում բանկի կողմից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների արտացոլման համար:

2. Փոփոխություններ և լրացումներ են կատարվել բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի լիցենզավորման կանոնակարգերում: Մասնավորապես՝

- Վերը նշված կազմակերպությունների համար սահմանվել է ղեկավարների գրանցման նպատակով ներկայացվող տեղեկությունների միասնական ձև: Այն հնարավորինս պարզեցվել և ավտոմատացվել է՝ առավել մատչելի դարձնելու նպատակով:
- Տեղեկությունների տրամադրումը առավել օպերատիվ իրականացնելու նպատակով վերը նշված կազմակերպությունները ղեկավարների գրանցման համար միջնորդագիրը պետք է ներկայացնեն էլեկտրոնային եղանակով: Այն կազմակերպությունները, որոնք դեռևս միացված չեն համապատասխան համակարգին, կարող են մինչև հուլիսի 1-ը ներկայացնել նույն տեղեկատվության թղթային տարբերակը՝ համապատասխան ստորագրություններով և կնիքով:
- Այն դեպքերում, երբ ղեկավարների վերաբերյալ տեղեկությունները փոփոխվում են, ներկայացվում են միայն փոփոխված տվյալները և նույնականացման տվյալները (անուն, ազգանուն, ծննդյան տվյալներ):

2009 թվականի առաջին եռամսյակի ընթացքում, արժեթղթերի շուկայի կարգավորման նպատակով, ՀՀ ԿԲ խորհրդի 2009 թվականի մարտի 10-ի թիվ 58-Ն որոշմամբ հաստատվել են «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ում կատարված փոփոխությունները և լրացումները: Կատարված փոփոխությունների հիմնական նպատակը ՀՀ ԿԲ կողմից վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների գրանցման ընթացակարգերի նույնականացումը և պարզեցումն է՝ գրանցման համար ՀՀ ԿԲ ներկայացվող փաստաթղթերի կրճատման և այդ փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու պահանջի միջոցով:

Ապահովագրական շուկայի կարգավորման ոլորտում 2009 թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. ՀՀ ԿԲ խորհրդի 2009 թ. մարտի 24-ի թիվ 65-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 3/02-ում: Բարձրացվել է մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվի (Ն5 նորմատիվ) առավելագույն սահմանաչափը:

2. ՀՀ ԿԲ խորհրդի 2009 թ. մարտի 10-ի թիվ 57-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել «Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ում: Փոփոխության հիմնական նպատակը ՀՀ կենտրոնական բանկի կողմից վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների գրանցման ընթացակարգերի նույնականացումը և պարզեցումն է՝ գրանցման համար ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերի կրճատման և այդ փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու պահանջի միջոցով:

Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը 2009թ. առաջին եռամսյակում


ՀՀ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2009 թ. առաջին եռամսյակում ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 5647 մլրդ դրամ (քանակը՝ 1377208), ընդ որում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 2383 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 562844: 2009թ. առաջին եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի համակարգերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 18.5%-ով (372 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 39.4%-ով (159173-ով): ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված փոխանցումների ծավալը 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 19%-ով (567 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 139432-ով (20 %):

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը (առանց բորսայական գործառնությունների) կազմել է մոտ 37 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 8794: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը 2008թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 5.8 մլրդ դրամով (քանակը՝ 2487-ով): Բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված միջին օրական փոխանցումների ծավալը կազմել է 67 մլրդ դրամ (ավելացել է 77%-ով):

2009թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) նվազել է Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումների տեսակարար կշիռը, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 26%-ը, քանակի 50%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախաձեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել է 14%-ով (103 մլրդ դրամով), իսկ քանակը ավելացել է 71631-ով (34 %):

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը (առանց բորսայական փոխանցումների)



2009 թ. առաջին եռամսյակում ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 85 մլրդ դրամի 1793463 գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 6.5 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 1.3 մլրդ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 406 մլն

դրամ, քարտից-քարտ փոխանցումներ՝ 918 մլն դրամ): Եռամսյակի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը կազմել է 483243, որը 2008թ. չորրորդ եռամսյակի վերջի համեմատությամբ ավելացել է 6.4%-ով (28886 քարտով): Հաշվետու եռամսյակի ընթացքում քարտերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է քարտային գործառնությունների մոտ 7.7%-ը: Ընդհանուր առմամբ, քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 44.8%-ով (2 մլրդ դրամով):

Հաշվետու ժամանակահատվածում առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով ֆիզիկական անձանց ուղղված դրամական փոխանցումները 2008թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել են 25.7%-ով և կազմել 86.5 մլրդ դրամ, իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալը նվազել է 42.8%-ով և կազմել 43.5 մլրդ դրամ:


ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

2009 թ. առաջին եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 41.5%-ը և քանակի 94.2%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ էլեկտրոնային վճարումների ծավալը նվազել է 3%-ով (35 մլրդ դրամով), իսկ քանակը ավելացել է 36%-ով (140552-ով): Բացի այդ, բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումները կազմել են 4298 մլրդ դրամ (ավելացել են 77%-ով): Առևտրային բանկերի կողմից էլեկտրոնային վճարումների համակարգով (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի մոտ 84.2%-ը (ավելացել են 177 մլրդ դրամով), իսկ քանակի՝ մոտ 99.8%-ը:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2008թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 2196-ով՝ կազմելով 8286, իսկ ծավալը նվազել է 0.5 մլրդ դրամով՝ կազմելով 15.5 մլրդ դրամ: Բորսայական գործառնությունների իրականացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում կատարված փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 67 մլրդ դրամ (ավելացել է 29 մլրդ դրամով):


Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել է մոտ 0.8 մլն դրամով և կազմել է 1.8 մլն դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգով առևտրային բանկերի կողմից բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների միջին ծավալը կազմել է 1242 մլն դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները (առանց բորսայական փոխանցումների)



Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են վճարումների քանակի 0.04%-ը, ծավալի 0.153%-ը (227 փոխանցում՝ 8.1 մլրդ դրամ ծավալով), ընդ որում՝ անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում իրականացված վճարումների քանակի 0.03%-ը, իսկ ծավալի 0.15%-ը (176 փոխանցում՝ 7.9 մլրդ դրամ ծավալով):

Բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված փոխանցումները միջին օրական վճարումներում



ՀԱՄԱԽՍՈՒՐՆ ԹՂԹԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

2009 թ. առաջին եռամսյակի ընթացքում թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են ՀՀ կենտրոնական բանկի համակարգերով իրականացված վճարումների ծավալի 55.9%-ը, իսկ քանակի 5.6%-ը (նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ծավալն ավելացել է 1.8-անգամ, քանակը՝ 2.6-անգամ):

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 498 փոխանցում՝ 20 մլրդ դրամ ծավալով (2008թ. առաջին եռամսյակի համեմատ փոխանցումների միջին օրական ծավալը աճել է 9.1 մլրդ դրամով), իսկ մեկ թղթային փոխանցման միջին ծավալը 2008թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել է մոտ 19 մլն դրամով և կազմել է 41.8 մլն դրամ: Համախառն թղթային վճարումների համակարգով փոխանցումների աճը հիմնականում պայմանավորված է կնքված ռեպո գործառնություններով:

2009թ. առաջին եռամսյակում առևտրային բանկերի միջև թղթային եղանակով իրականացվել է 9 մլրդ դրամ ծավալով 27 փոխանցում:

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակահատվածը	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով*		Բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումներ	
	էլեկտրոնային*		թղթային							
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
2008										
I եռ..	1024878	389728	745062	12179	240876	1764	2010816	403671	2422627	3026
տեսակարար կշիռը վճարումներում (%)	50.97	96.54	37.05	3.02	11.98	0.44	100	100		
II եռ.	1022887	488017	691740	16625	163687	1495	1878314	506137	2886558	3236
տեսակարար կշիռը վճարումներում (%)	54.46	96.42	36.83	3.29	8.71	0.29	100	100		

III եռ.	1275574	564371	798290	22434	172482	1376	2246326	588181	3172312	3683
տեսակարար կշիռը վճարումներում (%)	56.78	95.95	35.54	3.8	7.68	0.23	100	100		
IV եռ.	1536657	662776	1281886	38309	131764	1191	2950307	702276	3399058	3837
տեսակարար կշիռը վճարումներում (%)	52.08	94.38	43.45	5.45	4.47	0.17	100	100		
Ընդամենը	4859976	2104892	3516978	89547	708809	5826	9085763	2200265	11880556	13782
տեսակարար կշիռը վճարումներում (%)	23.18	95.07	16.77	4.04	3.38	0.26	100	100		
2009										
I եռ.	989806	530280	1333397	31860	59875	704	2383078	562844	4298084	3462
տեսակարար կշիռը վճարումներում (%)	41.54	94.21	55.95	5.66	2.51	0.13	100	100		

** Առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների:*

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2009 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 5 գործակալ և 17 դիլեր բանկեր, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան, «ՆԱՍԴԱՔ Օ-ԷՄ-ԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ն, մեկ ոչ բանկ դիլեր, ՀՀ ֆինանսների նախարարությունը (թողարկողի կարգավիճակով՝ պետական պարտատոմսերի հետ կապված), Գանձապետական պահառուն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի և թողարկողի կարգավիճակով՝ Կենտրոնական բանկի սեփական պարտատոմսերի հետ կապված):

Համակարգի կողմից պետական (գանձապետական) արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 466 հանձնարարական՝ մոտ 34.2 մլրդ դրամ ծավալով, ինչը 2008թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 2.7 մլրդ դրամով (որտեղ արժեթղթերի տեղաբաշխման հետ կապված վճարումները նվազել են 7.5 մլրդ դրամով, իսկ արժեթղթերի մարման հետ կապված վճարումները ավելացել է 10.3 մլրդ դրամով): Ընդ որում՝ առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պետական պարտատոմսերի դիմաց բանկերի կողմից կատարվել է 12.5 մլրդ դրամի փոխանցում, իսկ պետական արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 21.7 մլրդ դրամի փոխանցում: Այդ թվում՝ «Գանձապետական պահառու» համակարգի միջոցով պետական արժեթղթերի դիմաց կատարվել է 817 մլն դրամի վճարում, որտեղ համապատասխանաբար մոտ 356 մլն դրամը կազմել են արժեթղթերի տեղաբաշխման և մոտ 461 մլն դրամը՝ արժեթղթերի մարման դիմաց վճարումները:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի կողմից ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 13 հանձնարարական՝ 2.9 մլրդ դրամ ծավալով, որը 2008 թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել է 61 մլրդ դրամով (ընդ որում՝ 24 մլրդ դրամը կազմել են արժեթղթերի տեղաբաշխման հետ կապված վճարումները, իսկ 37 մլրդ դրամը՝ արժեթղթերի մարման հետ կապված վճարումները): Նշված արժեթղթերի առաջնային տեղաբաշխման ժամանակ առևտրային բանկերի կողմից ձեռք բերված՝ Կենտրոնական բանկի սեփական պարտատոմսերի դիմաց կատարվել է 1.6 մլրդ դրամի փոխանցում, իսկ Կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի մարման դիմաց՝ 1.3 մլրդ դրամի փոխանցում:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի մասնակիցների կողմից երկրորդային շուկայում արժեթղթերով կատարված առք ու վաճառքի գործառնությունների դիմաց (առաքում՝ վճարման դիմաց սկզբունքով) իրականացվել է 22.7 մլրդ դրամի 225 փոխանցում: Նշված ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է մոտ 84%-ով:

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

2009 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ հաճախորդներին պլաստիկ քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ 19 առևտրային բանկեր անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Հաշվետու ժամանակահատվածում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 53 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և 2009թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 591: Այդ թվում՝ «ԱրՔա» վճարային քարտերի սպասարկումը իրականացվում է 511 ավտոմատ գանձման սարքավորումների միջոցով: Առևտրային բանկերի կողմից տեղադրված POS-տերմինալների ընդհանուր քանակը 2358 է, այդ թվում՝ 423-ը տեղադրված է առևտրային բանկերի ստորաբաժանումներում: Տեղադրված իմպրինտերների ընդհանուր քանակը կազմել 31 է:

ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող(սպասարկող) քարտերի տեսակները

Բանկի անվանումը	ArCa	MASTER CARD	VISA	AMEX	Այլ քարտեր
Հայբիզնեսբանկ	+				
Անելիք բանկ	+	+	+		
Արարատ բանկ	+	+			
Ամերիա բանկ	+	+	+		
ՎՏԲ-Հայաստան բանկ	+		+		
Հայէկոնոմբանկ	+	+			
Պրոմեթեյ բանկ	+	+			
ԲՏԱ բանկ	+	+			
Զարգացման հայկական բանկ	+	+			
Կոնվերսբանկ	+	+	+		+
Ինեկոբանկ	+	+			
Մելլաթ բանկ	+				
Բիբլոս բանկ Արմենիա	+	+			
Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	+	+	+		+
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ	+		+		
Արցախբանկ	+	+			
Կասկադ բանկ	+	+			
Առէկսիմբանկ		+	+	+	
Յունիբանկ	+		+		
Արդշինինվեստբանկ	+	+	+		
ՊրոԿրեդիտբանկ			+		

2009 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ գործող «ԱրՔա» քարտերի քանակը 2008 թ. չորրորդ եռամսյակի վերջի համեմատ ավելացել է 9.9%-ով (19743 քարտով) և կազմել 219933: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակն ավելացել է 3.6%-ով (9143 քարտով), այդ թվում՝ VISA-ն՝ 2.7%-ով (4461 քարտով) և կազմել 170355, իսկ MasterCard-ը՝ 4.6%-ով (2181 քարտով) և կազմել 49950: Մնացած մասը բաժին է ընկնում միջազգային այլ քարտերին:

